

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2009

Բուլղարիան մեզ համար հետաքրքիր է այնքանով, որ այն պարկա-
նում էր Կայսրության մասամբ հայաբառ թուրքերենով ստեղծագործած
որոշակի շրջանների թվին, ինչն արդյունքն էր մի ողբերգական երևույթի,
երբ ոցիալ-փնյուսական, քաղաքական ծանր հետապնդումների հետևան-
քով բռնի դարձել էր թուրքալեզու հայ ժողովրդի մի հարվածը: Այս հար-
վածի ողջ ստեղծագործական միտքը մեզ է հասել մասամբ կամ լիովին՝
հայաբառ թուրքերենով: Նրանց ուժացումից փրկելու, դեպի մայր ժողովր-
դի գիրկը վերադարձնելու, հայախոսությունը վերականգնելու, առաքելա-
կան կրոնին հավաքարհմ մնալու կարևոր ինստիտուտի որպես հայաբառ
թուրքերենը մեծ առաքելություն ունեցավ: Այն նման էր մահամերձին
փրկելու համար արյուն ներարկելուն: Հայաբառ թուրքերենով ստեղծվեց
հսկայածավալ ձեռագիր ու փպագիր գրականություն, որը հետագայում
այնքան հզորացավ ու ինքնաբավ դարձավ, որ սկսեց ծառայել ոչ միայն
հանուն իր նախնական առաքելության, այլև դարձավ հայերեն իմացող-
ների ու օտարների համար կարևոր մշակութային գործոն: Գրահարաբա-
րակչությունը, պարբերական մամուլն այնպիսի հարուստ ու հզոր ուժ
դարձան, որ ակամա սկսեցին ազդել Կայսրության բոլոր թուրքախոս ազ-
գերի մշակույթի վրա, հասանելի ու ցանկալի դարձան փարբեր ազգերի
համար: Այն խթան հանդիսացավ Օսմանյան կայսրությունում ընդհանուր
գարթոնքի շրջանի բուռն զարգացման, դարձավ եվրոպական իրակա-
նության, մթնոլորտի, մշակույթի, առաջադիմական գաղափարների Թուր-
քիա ներթափանցման գործիք, միջոց: Պեղք է արձանագրել, որ այս գրա-
կանությունից ամենամեծ օգուտն ունեցավ նախ և առաջ թուրք ժողովուր-
դը: Հայաբառ թուրքերեն գրքերն ու պարբերականները կարդում էին պա-
լարից մինչև պաշտոնական վայրերում, փարբեր խավերի ընթանիքնե-
րում, սրճարաններում ու հարեմներում: Հայկական թարգմանական խմբերի
թուրքերենով ներկայացումները ողջ Կայսրությունով մեկ հեղափոխական
նշանակություն ունեցան և մշակութային առումով, և գաղափարախոսա-
կան: Մեծ էր նվաճումը նաև՝ գիտության, տեխնիկայի, գրական նոր լեզ-
վի, լուսավորական գրականության ու նրա գործիչների կազմավորման,
լրագրողական արվեստի, երաժշտության ու թատրոնի, ամենափարբեր
ճյուղերի զարգացման տեսանկյունից: ..

Այժմ հայաբառ թուրքերեն ձեռագրական ժանգոյթյան մասին, որ
գտնվում է Մալեմադարանում: Դրանց թիվն անցնում է շուրջ մեկ փաս-
կայից և ստեղծվել են 1830-70 ական թթ: Մալեմադարանում է գտնվում
Մահմետի Տեր Հարություն Քահանա Պողոսյան Վառնացու կողմից
գրված 3 կրոնադավանաբանական բովանդակության ձեռագրեր: Նա

ՆԱՍՄԻԿ ՍՏԵՓԵՆՅԱՆ

ՆԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԹԵՐԵՆ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՊՈԼԻՍ-ԲՈՒԼՂԱՐԱՆԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԴ.

Օսմանյան կայսրությունը, որ կազմված էր 30 նահանգներից, դը-
րանք էլ իրենց հերթին՝ գավառներից (սանջակ) ու գավառակներից (կա-
զա), քաղաքական, սոցիալ-փնյուսական փարբեր իրավիճակներում են
գտնվել: Օսմանյան կայսրության առանձնաշնորհյալ նահանգներ են հա-
մարվել՝ Եգիպտոսը, Թունիսը, Բոսնիան, Բուլղարիան, Առևելյան Ռումե-
լին և Մամուրը:

կազմել է առաձանի, թարգմանել, գրի առել չափազանց հեղափոխիչ ու ժամանակի համար կիրառական բարձրարժեք երեք ձեռագրեր: Դրանցից երկուսը վերաբերում են գյուղատնտեսությանը: Այն է՝ պտղաբույս ծառերի, հացահատիկային կուլտուրաների մշակմանը, պայքար նրանց վնասատուների դեմ, պարարտանյութերի մասին և այլն: Մյուսը՝ մրգերի ու բանջարեղենների պահպանման, մշակման եղանակների մի ողջ դասընթաց է: Նրա հեղինակած մի ձեռագիր՝ բառերի, անունների, մականունների հայերեն ու հայարառ թուրքերեն բառարան է: Մահտեսի Տեր Հարություն Զահանա Պողոսյան Վառնացին հթ է թարգմանել ու գրի առել ևս երեք կարևոր պարսկական գործեր: Դրանցից մեկը վերաբերում է խաչակիրների 1424թ. շրջանի պարսկությանը և կոչվում է «Եղիսաբեթ»: Մյուսը՝ Հուսիսիանոսի գորավարներից Բելիսարիոսի մասին է: Երրորդ ծավալուն պարսկական երկը Կոստանդին Մեծի պարսկությունն է:

Բուլղարիայում դարեվերջին 11 եկեղեցի կար: Սոֆիայում, Վառնայում, Թաթար-բազարչիկում, Բուրգասում, Սիլիստրայում, Կալաչում, Շումայում (Շումեն), Ռուսչուկում, Իսլիմլիեում և Դորբիչում՝ մեկական և 2-ը՝ Ֆիլիպեում (Պլովդիվում) գոյություն ունեին բազմաթիվ դպրոցներ:

Հայկական գաղութը հիմնականում կենտրոնացած է եղել Վառնայում, Ֆիլիպեում և Ռուսչուկում: Վառնան մշակութային մթնոլորտ ունեցող կենտրոն է եղել, իր գրական ավանդույթներով: Մանավանդ 19-րդ դարում, երբ բոլոր տեսակի հասարակական-մշակութային կազմակերպությունները վերելք էին ապրում, Բուլղարիան ևս համաքայլ էր այս զարգացմանը: Պոլսահայ գաղութի հետ սերտ կապն իրականացվում էր նաև շնորհիվ հայաբառ թուրքերեն պարբերականների, որոնք բաժանորդներ ունեին նաև Բուլղարիայում: Բազմաթիվ հայագի գործիչներ ու մասնագետներ ամենապարբեր ասպարեզներում, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցիչներ աշխարհել են Բուլղարիայում՝ ուղարկվելով կառավարության կողմից: Նրանցից շարքի գործունեությունը նշանակալից է եղել: Օրինակ, Արագործնախարարության ընդհանուր քարտուղար Մահակ Ապրո Չելեպին (1823-1900) 1876-ին Ֆիլիպեում կազմակերպված Արարկարգ խորհրդի անդամ, ապա և նախագահ է դարձել:

Բուլղարահայ գաղութը շար գգայուն է եղել Պոլսի, Արևմտյան Հայաստանի գավառներում կարարվող իրադարձությունների նկատմամբ: 1897թ. մարտի 6-ին Վառնայի թափրոնում հայկական թափրախումբը ներկայացնում է «Կոտորած Մասնա» պիեսը: Հայկական թափրախումբերը, որ Արդուլ Համիդի ժամանակ գրկված էին հայերեն լեզվով ներկայա-

ցումներ փայլու իրավունքից, այս մեծ բացն իրականացնում էին իրենց հյուրախաղերի ընթացքում: Ողջ դասական ու ազգային խաղացանկը, օպերետները ներկայացվում էր նաև բուլղարահայությանը, լավագույն դահլիճներում: Իսկ Բուլղարիայում արդեն կային հայկական թափրախումբեր՝ Վառնայում, Պլովդիվում: Թափրակական ներկայացումներ թուրքերենով դիտել են նաև Բուլղարիայում: Թափրոնի լեզուն հայաբառ թուրքերենն էր և ավելի քան 500 պիեսներ, եթե մեծ մասամբ նույնիսկ չեն հրատարակվել, ապա ոչ պակաս նշանակություն են ունեցել Օսմանյան կայսրության թուրքախոս, հիմնականում անգրագետ ու եվրոպական հասկացությամբ թափրոնին նոր-նոր ծանոթացող ունկրնդիրների համար:

1895թ. Դորբիչում հիմնադրվում է հայ կանանց պարախումբը: 1911թ. Ռուսչուկում՝ «Արարապ» սպորտային միությունը, իսկ ավելի ուշ՝ Պլովդիվ, Վառնա, Ռուսե քաղաքներում հիմնադրվում են Հայ մարմնամարզական Ընդհանուր միության մասնաճյուղերը (1921թ.): Դարասկզբին բուլղարահայության զարգացման համար կարևոր ազդակ է լինում 1911թ. Վառնայում և մյուս քաղաքներում ՀԲԸՄ մասնաճյուղերի հաստատումը: 1912թ. հայ զինվորական առաջին դպրոցն է հիմնադրվում Բուլղարիայում:

Առանձնակի հեղափոխություն է ներկայացնում պոլսահայ ճարտարապետների համագործակցությունը Բուլղարիայում: Դարեվերջին այսպեղ կառուցվում են լավագույն ճարտարապետական-մշակութային հուշարձանները:

1900թ. Ռուսեյում ճարտ. Նիկողոս Պետրոսյանը կառուցվում է Սիմերնովա առանձնատունը, Մշակույթի պալատը, Ժողովրդական Բանկը, Վառնայի պետական օպերային թատրոնը կառուցում է Հովսեփ Ազնավուրի կողմից: 1898 պոլսեցի ճարտ. Լևոն Կյուրեղյանը կառուցում է Վառնայի քաղաքապետարանի թատրոնի շենքը (կա փոստային բացիկ): Նույնը Պոլսում արդեն կառուցել էր Գյումուշտույու փալատը: Նրանք կառուցում են հայկական դպրոցներ, նախակրթարաններ (Վարդանանց արական ու Վառվառյան աղջկանց, 1894թ.): 1901թ.՝ Կարապետ Պիոնյան մասնավոր դպրոցը, 1895թ. Դորբիչում վերականգնվում է Վարդան Մամիկոնյան նախակրթարանը, 1896թ. Սոֆիայում սկսում է գործել նաև Արամյան դպրոցը, կառուցում, վերակառուցում հայկական եկեղեցիները:

Պոլսի Ֆեներ թաղում 1898թ. սեպտեմբերի 8-ին բացվում է Սվեթի Սյրեֆան բուլղարական երկաթե եկեղեցին: Ճարտարապետը ժամանակի հայրնի մասնագետներից՝ Հովսեփ Ազնավուրն էր: Այն ենթակա եկեղեցի էր:

Իհարկե, Բուլղարիայում ևս հեղափոխումներ ու հալածանքներ են եղել ազապ խոսքի համար: Հայ կոմսոցիստների նման այստեղ էլ սուլթաններին, Աբդուլ Համիդին նվիրված քայերգեր են գրվել: Օրինակ, երաժշտության պրոֆեսոր Ժյուլ փոն Կրեցչմանի Երկրորդ բուլղարական ռապսոդիան նվիրվել է Աբդուլ Համիդ Բ-ին: Իսկ 1910թ. Արփիարար Արփիարյանի «Կարմիր ժամուց» գործը Վառնայում փայլելու պարճառով արգելվում է հեղինակի մուրքը Թուրքիա: Բուլղարիայի դաշնակցական կուսակցության հայերեն «Շարժում» պարբերականի գլխ. խմբագիր Վարդան Պարիկյանը Ռուսչուկում սպանվում է րեճոռիստ ընկերների կողմից 1907թ. նոյեմբերի 22-ին: 1908թ. Ֆիլիպետով «Ռազմիկ» թերթի գլխավոր խմբագիր Ռուբեն Զարդարյանը Քասթամունի է արտոբվում և այլն:

19-րդ դարի կեսերից պոլսահայ գործարարները ծխախոտի ֆաբրիկաներ են հիմնում Եգիպտոսում, Հունաստանում, և Բուլղարիայում: 1908թ. Պոլովիվում «Գրիգոր Թովմասյան և որդի» ընկերությունը ծխախոտի ֆաբրիկա է հիմնում: Ֆիլիպետով 1909թ. իրենց մասնաճյուղն են բացում «Մ և Գ. Շամբրանճեան ընկր».-ը, որ ամեն րեսակ ու շքեղ կերպասեղենի մեծաքանակ առևրոբ էր գրաղվում: Եղեռնից հեղտ Սոֆիա հաստարված Տարուրյան եղբայրները կաշվի մշակման ֆաբրիկա են բացում: Եվ այսպես շարունակ...

1914 Պոլովիվում դոկ. Պեղոոս Օրմանյանը հիմնում է առաջին առողջարանը:

Բուլղարիայում ըստ մարենագիտական աղբյուրների 80 հայ արբերականներ են հրատարակվել 10 քաղաքներում: Գրբեր րպագրվել են Սոֆիայում, Պոլովիվում (Ֆիլիպպե) և այլ վայրերում: Կարևորներից մի քանիսը 1909թ. Աբր. Ամիրխանյանը արարբերենից հայերեն է թարգմանում Ղուրանը րպում Վառնայում, Դոբրի Թոդորով րպարանում: 1910թ. Վառնայում Արշակ Ալպոյանյանը «Իրավունք» թերթի րպարանում հրատարակում է «Պուկարաց պարմութիւնը. Անոնց ծագումն մինչև մեր օրերը»՝ արարարված «Բիզանդիոն»-ից: Լյուբֆեյան Տաճարը հրատարակում է «Արևելյան Ռումելիան և հայերը» 34 էջանոց գրքույկը Գրասիրաց րպարանում, (Ֆիլիպպե, 1885թ.): Պոլսում րպագրվել է Զաքարիա Սրոյանուվի մասին գիրքը, որպես հայերենասիրության օրինակ (րես Մարենագիտություն, 1300): Այս և որոշ գրբեր մեզ ծանոթ են մարենագիտական աղբյուրներից: Բարսեղ Թուղլաճիի «Արևմտահայերը պարմության մեջ» գրքում եղած րիպոդոսաթերթերը հաստարում են նրանց րպագրությունները: Հայատառ թուրբերեն պարբերականների հրատարակությունների կենտրոնը եղել է Վառնան (10 անուն):

Հայատառ թուրբերենով Սոֆիայում րպագրվել են՝

Աստուր Մկրտչյանի հեղինակությամբ, պարկառելի ծավալով (543 էջ) բուլղարերեն-հայերեն-րանկերեն բառարանը, 1904թ. Գ. Չեղոֆի րպարանում: Մա նշանակում է որ հայերեն րատերը եղել են համարյա բոլոր րպարաններին հասու:

Վառնայում՝ 5 գիրք, հիմնականում կատակերգություն, պիես-թերթոններ, արարարված հայատառ թուրբերեն մամուլից:

Բուլղարիայում հրատարակված պարբերական մամուլը երբեմն արարահայրվել է երկլեզու, եռալեզու հրատարակություններով: Վառնայում առաջին հթ պարբերականը եղել է

1. «Իրավունք»-ը (1884-1885). հ և հթ: Վառնայի երիտասարդաց մշությունն է հրատարակել Անդրանիկ Եօանեսուկուի խմբագրությամբ, րպագրել Ռումինահայ Անդրանիկ Եօանեսուկուի րպարանում: Հրատարակել է նաև ֆրանսերեն հողվածներ:
2. «Իրավունք»-ը (1896-1911),¹ Վառնա: Հայերեն այս երկշաբաթաթերթը, ապա՝ եոոբյան, իր քաղաքական լուրերի համար ունեցել է հավելված՝ 4-րդ էջ: Մի քանի համար ունեցել նաև բուլղարերեն հավելված էջ: Տպագրվել է «Վզաիմնոստ», Դ.Տոդորով և որդիք րպարաններում, մինչ հեղտ ունեցել սեփական րպարան:
3. «Կարակ» Ազգային ու զավեշրական եոոբյա թերթը(1897), Վառնա: Այն րպագրվել է Կ.Նիկոլովի րպարանում, իր էջերում որպես կանոն րպագրել հթ նյութեր:
4. «Այինէի Լիթայիֆ» (Զվարճալի հայելի) Վառնա, (1897). Տպ. «Հայելի» և «Վզաիմնոստ»: Տնօրեն՝ Տիրան Փափագյան: Այս զավեշրաթերթը 1897-1903թթ. Վառնայում և 1903-4թթ. Ալեքսանդրիայում հրատարակված «Հայելի» ազգային և զավեշրաթերթ-շաբաթաթերթի հայատառ թուրբերեն հավելվածն է եղել:
5. «Տավրոս» (1898) հայ ազգային, քաղաքական, գրական և քննադատական թերթ, որը շարունակությունն է հանդիսացել «Կարակ»ի, րպագրվել «Վզաիմնոստ» և Վոյնիկովի րպարաններում, շարունակել հայատառ թուրբերեն հրատարակությունների ավանդույթը, նույն խմբագիր րնօրենի՝ Հարություն Չաքրյանի օրոք :
6. «Շարժում Իվալեսի» երկշաբաթաթերթ, 4 էջ: Վառնա, (1901): Տնօրեն՝ Մկրտիչ Վարդան: Տպարան Օրիենտալ (Արամյանի): Հայերեն «Շարժում»-ի քաղաքական լուրերի հավելվածն է: Զարմանալի է, սակայն փաստ է որ զավեշրաթերթերը, րարեցույցրը այստեղ որակ են կազմել:

Նամատուր անդրադատնանք մի հայ նշանավոր գործչի:

Թադեոս Տիվիթճյանը (1810-1878), պոլսահայ, որ փրապետում էր հունարեն, բուլղարերեն, իտալերեն լեզուներին, Օսմանյան կայսրությունում առաջինն էր, որ ձուլեց բուլղարերեն փառերը, փայագրեց բազմաթիվ գրքեր, որոնք ուղարկվում էին Բուլղարիա, մրավորական, հոգևոր սնունդ հասցնում այդ երկրին: Տարին երկու անգամ Տիվիթճյանն ինքն էր ճամփորդում այնպեղ, հակերով գրքեր փանում, որոնց մեծ մասը ապառիկ վաճառում էր ու փարածում: Նա փայագրական գործ էր սովորեցնում բուլղարներին, նպաստելով այդ երկրի ու ժողովրդի լուսավորական գործին: Իրավամբ նրան կոչել են «Բուլղարների Գրիգոր Լուսավորիչ»: Բուլղարական հեղափոխության ժամանակ ծխախոտի թղթի փուփերի կափարիչների վրա ստրկության լուծը թոթափելու սրտառուչ կոչ էր փայագրել, որի համար էլ ձերբակալվել էր, փուզանվել: Երախտապարտ բուլղարները ժամանակին սովորություն են ունեցել փարին մեկ անգամ Սոֆիայի Մայր եկեղեցում նրա հոգեհանգիստը կափարել, իրենց ժողովրդի բարերարների հետ միասին ոգեկոչելով նրա անունը: Այսօր՝ չգիտեմ, մնացել է ազդ գգացումը: